



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍԻ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2/5**

«23» հունիսի 2022 թվականի գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍԻ**

**ՆԻՍԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝**

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը

**ՆԻՍԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝**

Տեղ համայնքի ավագանու թվով 10 (տասը) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Ղուկասյան Արագած Արշավիրի
4. Միքայելյան Աննա Միքայելի
5. Առաքելյան Վահե Վարդանի
6. Դալլաքյան Արման Յուրիկի
7. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
8. Դանիելյան Սևադա Վիտալիկի
9. Հովսեփյան Արգամ Ռադյայի
10. Հայրապետյան Հայրապետ Նորայրի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 5 (հինգ) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Ասպետ Գալստյանը, Նազիկ Բաղդասարյանը, Լորա Սիմոնյանը և Մասիս Ջեյնալյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդազյույանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու թվով 10 (տասը) անդամները:

**ՆԻՍԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝**

Քարաշենի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, Արավուսի վարչական ղեկավար Արթուր Զհանգիրյանը, աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 64-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին որոշում է. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 23-ի 2-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 43-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
3. «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրին Տեղ համայնքի անդամակցությանը համաձայնություն տալու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 10                      դեմ – 0                      ձեռնպահ – 0  
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 17-ի